

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Մ. ՄԱՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ. Կ. Կ. ԿՈՄԻՏԵԻ ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 1

619.3
7-84

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Ն. Պ. ՊՈՊՈՎ
(Ս.ՆԱՍՏԱՐՈՒՄ)

ՎՈՉԻՄԱՐԻ ԲՅԱՓԱՆԱԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ



ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄ. Ա. Բ.

ագրուքյամբ
Խ. ՅԵՐԵՅՅԱՆԻ



ՅԵՐԵՎԱՆ—1924

Պրոլետարի տրեստի I-ին տպարան

103-70

9070

619
D-84 Mr'

ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ. Կ. Կ. ԿՈՄԻՏԵԻ ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 1

Պրոլետարներ բոլոր յերկրների միացեք.

610
143-70

Ն. Պ. ՊՈՊՈՎ
(Անասնաբույժ)

1003
10347

ՎՈՉԻՍՔԻ

ՔՅԱՓԱՆԱԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՒՍԵՐԵՆԻՅ ԹԱՐԳՄ. Ա. Բ.

Խմբագրություն
Խ. ՏԵՐԻՅՅԱՆԻ



ՏԵՐԵՎԱՆ—1924

Պոլիտբյուրոյի I-ին տպարան

010
07-67

ՎՈՉԽԱՐԱՏԵՐԵՐԻՆ

Ամեն մի գյուղացի զիտե, վոր քյափանակ հիվանդությունը հարյուրներով ու հազարներով վոչխարներ ե կոտորում: Սատկոտում են քյափանակից մանավանդ աշնան վերջերը և ձմեռները, յերբ կերի պակասության շնորհիվ վոչխարը լղարում ե ու թուլանում: Շատ զոհեր ե տանում այդ հիվանդությունը և նոր ծնած վոչխարներից, վորոնք ծննդաբերության հետ կապված անխուսափելի թուլության շնորհիվ չեն կարողանում դիմանալ ու սատկում են:

Չարիքի դեմ կովելու համար հարկավոր ե նրա հետ լավ ծանոթ լինել: Այս գրքույկի մեջ շատ պարզ կերպով խոսվում ե այն մասին, թե վորտեղից ե առաջանում քյափանակ հիվանդությունը, ինչպես ե զարգանում ու տարածվում, ինչպիսի պայմաններում ե նա ավելի մեծ վնաս տալիս և վորոնք են զրա դեմ կովելու մշոցները:

Թող կարգա այս գրքույկը ամեն մի վոչխարատեր և առաջնորդվի սրա մեջ բերած խորհուրդներով:

Խ. Յերիցյան

ՎՈՉԻՍՐԻ «ՔՅԱՓԱՆԱԿ» ՀԻՎԱՆ- ԴՈՒԹՅՈՒՆԸ

Սորհրդային Միության այն շրջաններում, վորտեղ խաչնարածութիւնը զարգացած է, շատ տարածված է վոչխարի «քյափանակ» կոչված հիվանդութիւնը:

«Քյափանակից» վոչխարները կոտորվում են նույնքան շատ, ինչքան դանազան վարակիչ հիվանդութիւններից:

Այդ հիվանդութիւնն ամեն տեղ տարածված է: Հաճախ «քյափանակից» ամբողջ հոտեր են կոտորվում: Որինակ 1873 թ. Ֆրանսիայի մի նահանգում վոչխարների մի յերրոգ մասը վոչնչացավ այդ հիվանդութիւնից և ժողովրդին յերեք հարյուր հազար ուղբու վեաս պատճառեց: Անգլիայում համարյա ամեն տարի մոտ մի միլիոն գլուխ վոչխար է սատկում «քյափանակից»: Հունգարիայի յերկու շրջաններում չորս տարվա ընթացքում համարյա բոլոր վոչխարները կոտորվեցին: Ռուսաստանի շատ նահանգներում էլ տարված է այդ հիվանդութիւնը. որինակ 1909—11 թվերի ընթացքում Մոսկվայի նա-

հանդի մի քանի դավաճներում «քյափանակ»-ի պատճառով խաշնարածությունը բոլորովին վերջացավ: Նույն պատկերն է և մյուս նահանգներում: Իհարկե, Հայաստանում ել կա այդ հիվանդությունը, վորը նույնպես մեծ զոհեր է տանում, բայց մենք թվական տեղեկություն չունենք մեր յերկրի համար, վորոչելու, թե «քյափանակը» մեր խաշնարածությանը ինչքան վրնաս է տալիս ամեն տարի:

Ինչպե՞ս կովել այդ շարիքի դեմ, վոր պատուհաս է դարձել խաշնարածության համար և մեծ վնաս է հասցնում թե խաշնարած գյուղացուն և թե պետությանը:

Այդ շարիքի դեմ կովելու համար հարկավոր է, վոր այդ կովին մասնակցեն ամենից առաջ իրենք՝ խաշնարած գյուղացիք:

Առանց դրան պետության ձեռք առած միջոցները, ինչպես և դիտնականների ջանքերը՝ արդյունք չեն տալ, անողուտ կլինեն:

«Քյափանակի» դեմ կովելու համար հարկավոր է իմանալ, թե

1. Ի՞նչ է հիվանդության պատճառը:
2. Ինչպե՞ս է զարգանում այն ճիճուն, վոր վոչխարի լյարդի մեջ առաջ է բերում այդ հիվանդությունը:
3. Վոչխարներն ինչպե՞ս են վարակվում «քյափանակով»:

4. «Քյափանակով» հիվանդ վոչխարին ինչպե՞ս ճանաչել:

5. Ինչպե՞ս անել, վոր վոչխարները չհիվանդանան:

1. ԻՆՉՆ Ե «ԲՅԱՓԱՆԱԿ» ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՐԸ

«Քյափանակ» հիվանդության պատճառը մի տեսակ ճիճու է, վոր արտաքուստ նման է ծառի տերեվի (տես նկար 1) նա պարագիտ է, այսինքն անվում է վոչխարի մարմնի մեջ, նրա հյուսթերով: Այդ պարագիտն ունի յեկու ծծող ուռուցիկներ, վորոնցով կպչում է վոչխարի լյարդին (սեւ թոք, կամ ջիգյար) և ծծում. Այդ ճիճուն, վոր բավական խոշոր է, ապրում է վոչխարի լյարդի մեջ, լյարդի լեղիատար անցքերում, ջրքրում քայքայում է լյարդը, և այդպիսով սպանում վոչխարին: «Քյափանակից» ամենից շատ վոչխարն է վնասվում, չնայած վոր այդ ճիճուն ապրում է և ուրիշ կենդանիների լյարդում, որինակ կովի, յերբեմն ել խոզի, այծի, ուղտի, ձիու, նապաստակի և նույնիսկ մարդու լյարդում:

**2. ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ԱՅԴ ՃԻՃՈՒՆ,
ՎՈՐ ՎՈՉԻԱՐԻ ԼՅԱՐԴԻ ՄԵՋ ԱՌԱՋ Ե ԲԵՐՈՒՄ
«ԲՅԱՓԱՆԱԿ» ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

Սյդ ճիճուի ուսումնասիրությունը, նրա
զարգացման ու վարակման մասին յեղած տե-
ղեկությունը մենք պարտական ենք յերկու նը-
շանավոր գիտնականների՝ գերմանացի Լեյկար-
տին և անգլիացի Տոմսոնին: Բանից դուրս և
գալիս, վոր այդ ճիճուի կյանքը շատ առանձնա-
հատուկ է և զարմանալի: Հիվանդ վոչխարի կտի-
տի (կուռի, թրբի) հետ միասին խոշոր ճիճուների
ձուները դուրս են թափվում: Սյդ ձուները, մինչեւ
վեց ամիս կարող են անփնաս մնալ վոչխարի կը-
տիտի մեջ, յեթե կտիտը չըչորանա: Վոչխարի ա-
մեն մի կտիտի մեջ, յեթե վոչխարը «քայափա-
նակով» հիվանդ է, լինում է մինչեւ 100 հատ
ձու: (տես նկ 2)


Յեթե այդ ձվիկը խոնավ տեղ է ընկնում,
կամ թե ջրի մեջ, (յերբ վոր վոչխարը ջրելու
յեն տանում և նրանց աղբը թափվում է ջրի
մեջ) մի 3—4 շաբաթից հետո ձվիկից դուրս է
գալիս մի փոքրիկ վորդ (տես նկ 3) այդ վորդը
հասարակ աչքով անտեսանելի յե: Նա սկսում է
ջրի մեջ շատ արագ լողալ զանազան ուղղու-
թյամբ, մինչեւ վոր գտնում է ջրային խխուն-
ջին: (տես նկ 4)



Նկար 1




Նկար 2



Նկար 3



Նկար 4



Նկար 5

Այդ խխունջը սովորաբար ապրում է խոնավ մարզերում, ճահճոտ, ճլուստեղերում, դանդաղ հոսող առուների մեջ և այլն: Հենց վոր այդ փոքրիկ վորդը գտնում է խխունջին, կաչում է նրան, իր կնճիթով ծակում է խխունջի գրախ պատյանը, ներս է խցկվում խխունջի մարմնի մեջ՝ սնվում նրա մարմնի հյութերով:

Խխունջի մարմնի մեջ այդ փոքրիկ վորդը սկսում է շատ արագ զարգանալ, բազմանալ և սալ նոր վորդեր՝ մինչև վ հարյուր հատ: Այդպես շատանալուց հետո այդ վորդերը դուրս են գալիս խխունջի մարմնից, նորից սկսում են լողալ ջրի մեջ, կամ կաչում են վորեվե առարկայի կամ բույսի և ապա ծածկվում են հաստ պատյանով և այսպես մնում: (տես նկ 5) Այդ դրությամբ, յեթե պայմանները բարեհաջող են, նըրանք կարող յեն մինչև վ վեց ամիս մնալ: Նույնիսկ ձմեռվա ցուրտն անգամ չի կլասում նըրանց կյանքին. սակայն չոր տեղում շատ շուտ են վոչնչանում: Այդ դրությամբ, պատյանի մեջ, վորդերը մնում են այնքան, մինչև վ վոր ջուրը մի քիչ սրահասի և խոտի կամ խմելու ջրի հետ վոչխարների ստամոքսի մեջ մտնեն: Ստամոքսից նոքա անցնում են դեպի լյարդը, նորից ձու յեն ածում, այդ ձուերը վոչխարի կտիտի հետ միասին ցրվում են արոտատեղու:

Իսկ «քյափանակի ճիճուն մի որում կարող է մինչև վ յերկու հարյուր ձու ածել:

3. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎՈՉԽԱՐՆԵՐԸ ՎԱՐԱԿՎՈՒՄ «ՔՅԱՓԱՆԱԿՈՎ»

Արդեն ասացինք, վոր խմելու ջրի հետ, կամ կանաչ խոտի հետ, պատյանի մեջ պահված «քյափանակի» ճիճուներն ընկնում են վոչխարի ստամոքսի մեջ: Այդ բանը սովորաբար պատահում է ճահճոտ տեղերում, ջրովի մարզերում կամ խոնավ չիմաններում, վորտեղ ջուր է հալվաքվում. վոչխարը խմում է այդ ջրից, իսկ այդ ջրի մեջ շատ կան «քյափանակի» վորդեր: Վոչխարը կվարակվի և այն դեպքում, յեթե կանաչ խոտի հետ ուտի նայել ջրային խխունջներին, վորոնց վրա շատ կան այն վորդերից: Վոչխարը գոմում էլ կարող է վարակվել, յեթե նըրան կերակրում են խոնավ չիմաններից, ճլուստներից քաղած կանաչ խոտով: «Քյափանակի» վորդեր կարող են լինել և նոր չորացրած խոտի վրա, յեթե այդ խոտը քաղել են ճահճոտ ու խոնավ խոտհարքներից:

Բայց ինչո՞վ բացատրել այն, վոր մի քանի տեղերում, չնայած վոր կա ջրովի մարզեր ու ճահճոտ չիմաններ, վոչխարը «քյափանակով» չի հիվանդանում: Յեթե ուշադրությամբ փնտրենք

դրա պատճառը միշտ ել կարող ենք գտնել: Յերկու պատճառ կարող ե լինել. նախ վոր այդ տեղերում չկա ջրային խխունջ: Իսկ մենք արդեն տեսանք, վոր «քյափանակի» վորդերը պիտի սնվեն այդ խխունջի մարմնի մեջ. առանց դրան նրանք չեն կարող զարգանալ և վոչխարին փասել: Յերկրորդ պատճառն ել այն ե, վոր **ուրիշ շրջաններից «քյափանակով» վարակված** վոչխար չեն բերում այդ տեղ, ուրեմն և հանդիշուրը չի աղտոտվում հիվանդ վոչխարի աղբով:

«Քյափանակը» ավելի շատ տարածվում ե բնտանի կենդանիների, մանավանդ վոչխարների և կովերի միջոցով: Վարակված շրջաններից դեպի առողջ վայրերն անցնելու ժամանակ այդ կենդանիներն իրենց աղբի հետ միասին ցրում են և «քյափանակի» ձվիկներ: Յերբեմն վայրի կենդանիներն ել կարող են տարածել «քյափանակ»: որինակ նապաստակը, վայրի այծը և այլն: Վարակման ամենից հարմար ժամանակն ամառն ե և աշունը:

Մենք տեսանք, վոր «քյափանակի» վորդերի աճման համար խոնավությունն անհրաժեշտ ե: Ուրեմն պարզ ե, վոր անձրեվառատ ամառը շատ ե նպաստում «քյափանակի» տարածման: Վոչխարների վարակման համար կարեվոր ե և այն, թե վտանգավոր համարված

չիմանում վորքան ժամանակ ե վոչխարն արածում. ինչքան շատ արածի, այնքան ավելի շատ պիտի կուլ տա «քյափանակի» վորդեր: Բոլոր կենդանիների մեջ «քյափանակը» ամենից շատ վոչխարի համար ե վտանգավոր, պակաս անվտանգ ե խոշոր յեղջուրավոր անասունների համար, իսկ խոզի, ձիու և շան համար համարյա թե վոչ մի նշանակության չունի:

4. ԻՆՉՊԵՍ ՔԱՆԱՉԵԼ «ԲՅԱՓԱՆԱԿՈՎ» ԿԻՎԱՆԻ ՎՈՉԽԱՐԻՆ

Առաջին անգամ, մանավանդ վոչ մասնագետի համար, դժվար ե ճանաչել «քյափանակով» հիվանդ վոչխարին: Սովորաբար հիվանդության նշանները նկատելի չեն աշնան ժամանակ, յերբ հիվանդությունն ուժեղանում ե: Այդ ժամանակ հիվանդ վոչխարի աչքերի շուրջն ուռուցքներ են առաջանում, աչքերը ջրակալում են, ներքին ծնոտի տակ, կրծքի վրա և փորի ստորին պատի վրա յերեվում են խմորի նման ուռուցքներ: Վոչխարները թուլանում են, կերին ախորժակով չեն մոտենում, շատ դանդաղ են վորոճում, բուրդը կոշտանում ե, դառնում անհավասար ու շատ հեշտ թափվում ե: Յերբեմն ել փորլուծ ե լինում և վոչխարը պատկում ե կատարյալ մաշվելով:

Յեթե վարակումը շատ ուժեղ է, հիվանդութեան առաջին նշաններից 7—9 որ հետո վոչխարները սատկոտում են: «Քյափանակից» սատկած վոչխարի փորը յեթե պատռենք, կրտենենք մեծ չափով հեղուկ: Բայց զլիսավոր ուշադրութեամբ հարկավոր է լյարդի վրա դարձնել: Առողջ վոչխարի լյարդի հետ համեմատած հիվանդ վոչխարի լյարդը շատ մեծ է և պինդ, կտրելիս՝ դրձում է, կարծես թե լյարդի մեջ ավազ լինի: Լյարդի լեղիատար անցքերից դուրս է հոսում կանաչ գույնի լորձուկը և ինքը հիվանդութեան պատճառը՝ «քյափանակ» փորդը:

Յուրաքանչյուր գյուղացի և խաշնարած պետք է իմանա, վոր յեթե վոչխարի մեջ մի վորեվե հիվանդութեան նշան է յերեւում, կամ թե կասկած կա հիվանդութեան, հարկավոր է դիմել մասնագետին, այսինքն անասնաբուժին: Յեթե ոգնութեանը ժամանակին լինի, վոչ գյուղացին կզրկվի յուր վոչխարներից և վոչ էլ պետութեանն անչափ վնաս կստանա:

**ԻՆՉ ԱՆԵԼ, ՎՈՐ ՎՈՉԽԱՐԸ «ՔՅԱՓԱՆԱԿՈՎ»
ՉԿԻՎԱՆԴԱՆԱ**

«Քյափանակի» բժշկութեանը մինչեւ որս էլ յերկրորդական նշանակութեան ունի: Հարկավոր է վոչխարը լավ պահել, լավ սնունդ տալ,

1003
1934
ԿՍԾԼ

վորովհետեւ լավ պահած վոչխարն ավելի հեշտ է տանում հիվանդութեանը, քան լարն ու թույլը: Կղար և հյուսված վոչխարը «քյափանակից» շատ շուտ է սատկում: Յուրաքանչյուր խաշնարած գյուղացի պիտի իմանա, վոր «քյափանակի» դեմ կովելու ամենալավ միջոցը վոչխարը խոնավ չիման չուղարկելն է, մանավանդ Չահենների համար: Հիվանդ վոչխարի աղբն իր մեջ անհամար ձվիկներ ունի. ուրեմն հարկավոր է այդ վարակված աղբը բոլորովին վոչնչացնել: Այդպիսի աղբով միայն չոր դաշտը կտրելի յե պարարտացնել. այդ չոր դաշտից անձրեվը չի կարող աղբը տանել այնպիսի խոնավ տեղ, վորտեղ կա ջրային խխունջ: Յեթե մոտիկ տեղում կա ջուր, վոչխարի վարակած աղբից «քյափանակի» ձվիկները շատ հեշտ կարող են ընկնել այդ ջրի մեջ: Ամենից լավ միջոցը՝ այդ վարակված աղբը վառելն է, կամ մի յերկու տարով հարկավոր է աղբը խոր թաղել հողի մեջ: Պետք է խստիվ արգելել, վոր վոչխարի կամ կովի թրիքով չաղտոտեն այն ջուրը, վորտեղից վոչխարը խմում է: Ջուր տալու ժամանակ պիտի հսկել, վոր անասունները ջրի մեջ չմտնեն, ինչպես և հարկավոր է հետեւել, վոր անձրեվի հետ ջրի մեջ չխառնվի վոչխարի կամ կովի աղբը: Պիտի ամեն միջոց գործադրել բոլորովին

վերացնելու ջրային խխունջին, առանց վորի հիվանդությունը չի տարածվում: Այդ նպատակի համար շատ տեղեր խոնավ չիմաններն ու ճահիճները, ճահճացած մարգագետինն ու դանդաղ հոսող առվակի շրջակա խոնավ հողերը արհեստական ձեւով հարկավոր ե չորացնել, առուներ շինել և ջուրը հեռացնել: Այդ միջոցն ամենալավն է: Պիտի հսկել, վոր հիվանդ վոչխարի լյարդը իսկույն վոչնչացվի, թե չե հիվանդությունը կարող ե տարածվել: Այդ վարակված լյարդը լավ յեփելուց հետո կարելի յե տալ շներին:

Ի վերջո պիտի ասել, վոր «բյափանակ» հիվանդության դեմ մղվելիք պայքարը մի մարդու կամ մի շրջանի գործ չե: Այդ պայքարն ընդհանուր պետական նշանակություն ունի, նրանից ե կախված հանրապետության և մեր խաշնարածության բարելավ վիճակը:

Այդ պիտի շեշտել մանավանդ ներկա մոմենտում, յերբ բրդի յուրաքանչյուր կտոր պիտի հաշվի առնել և բուրդ տվող վոչխարի կյանքը վոսկու քաշով պիտի գնահատել:

«Բյափանակի» դեմ կռիվը բավական կհեշտանար, յեթե այդ կռվին մասնագետները հետ միասին մասնակցեր վողջ Եանագրգուված բնակ-

չությունը, մանավանդ խաշնարած գյուղացիք և զանազան հիմնարկներ: Անհրաժեշտ ե նայել լայն պրոպագանդա՝ մատչելի գրքուկների և զրույցների միջոցով:



1871
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

« Ազգային գրադարան



NL0281235

9070



ԳԻՆՆ Ե՛ 10 ԿՈՊԵԿ ԶԵՐԿ.

